ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

24.01.2024Թ. Ք. ԻՋԵՎԱՆ

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները:

ՕՐԱԿԱՐԳ

1. Ֆակուլտետի գիտական խորհրդի 2023-24 ուստարվա II կիսամյակի աշխատանքների պլան-ժամանակացույցի քննարկում և հաստատում:
2. Հաղորդում 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման նախապատրաստական աշխատանքների մասին:
3. Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի և աշխատանքների կատարման ժամանակացույցների հաստատում:
4. 1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքների վերաբերյալ ամբիոնային հաշվետվությունների ներկայացում:
5. Ավարտական աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ հաշվետվությունների քննարկում:

Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի պաշտոնակատար, խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյան:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ֆակուլտետի խորհրդի 2023-24 ուստարվա աշխատանքային պլանը և նշվեց, որ վերջինս բխում է մասնաճյուղի 2023-2027թթ. ռազմավարական և ֆակուլտետի զարգացման պլաններից, որն ընդգրկում է բակալավրի ուսումնական պրոցեսների բոլոր գործընթացները:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀԴՄ անդամ Ք. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Տ. Բագամյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Տնօրենության հաստատմանը ներկայացնել 2023-24 ուստարվա ֆակուլտետի գիտական խորհրդի աշխատանքային պլանը:

ԼՍԵՑԻՆ.

Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ զեկուցումով հանդես եկան խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը և «Գծանկարի, գունանկարի և քանդակի» ամբիոնի վարիչի պաշտոնակատար Հ. Ասատրյանը: Զեկուցողները ներկայացրեցին, որ արդեն պատրաստ է 2023-2024 ուստարվա ամբիոնային և անհատական բեռնվածությունները և վերջինիս հիման վրա կազմված է երկրորդ կիսամյակի դասացուցակները: Զեկուցողները նշեցին, որ ուսումնական պրակտիկաները ևս բաշխված են: Զեկուցողները նշեցին, որ դասախոսները պետք է սեղմ ժամկետում ամբիոն ներկայացնեն առարկայական փաթեթները, իրենց դասընթացների ուսումնական պլանները, ուսումնական նյութերն ու առաջադրանքները զետեղեն ուսուցման էլեկտրոնային կառավարման e-lerning.am հարթակում: Նրանք դասախոսներին հորդորեցին ժամանակ չկորցնել և զբաղվել դասընթացների փաթեթների կազմմամբ՝ հետևելով առկա մեթոդական նյութերին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՀՆՄ անդամ Հ. Մխիթարյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը, ՀՆՄ անդամ Մ. Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

2023-2024 ուստարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգի երրորդ հարցի վերաբերյալ զեկուցեց ֆակուլտետի դեկանի պաշտոնակատար Վ. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց կրթական ծրագրի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքները: Զեկուցողը նշեց, որ ընդհանուր առմամբ կրթական ծրագիրը պատրաստ է: Նա նաև նշեց, որ նախատեսվում է «Դեկորատիվ-կիրառական արվեստ» կրթական ծրագրի ուսումնական պլանում որոշակի փոփոխություններ կատարել և, ըստ այդմ, կրթական ծրագրերի նկարագրիչների վերջնական տեսքի բերելու համար դեռևս աշխատանքներ կտարվեն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

Հ. Ասատրյանը, Մ. Ստեփանյանը

ՈՐՈՇԵՑԻՆ.

Կրթական ծրագրերի վերանայման աշխատանքային խմբերի կողմից իրականացված աշխատանքները համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգի 4-րդ հարցի վերաբերյալ զեկուցեց խորհրդի նախագահ Վ. Աղաբաբյանը: Նա նշեց, որ II կիսամյակում ունեցել են հետազոտական աշխատանք ներառող մասնագիտական դասընթացներ: Հետազոտական աշխատանքների թեմաները ամբիոններ են ներկայացվել 2023-2024 ուսումնական տարվա սկզբին: Ուսանողները նախօրոք ծանոթացել և ընտրել են թեմաները: Ամբողջ կիսամյակի ընթացքում պարբերաբար անդրադարձ է եղել հետազոտական աշխատանքների թեմաներին, և դրանք քննարկվել են: Կարևորելով հարցը՝ ամբիոններում քննարկվել են հետազոտական բաղադրիչ ունեցող առարկաները, դրանք ղեկավարած դասախոսները ներկայացրել են համապատասխան հաշվետվություններ: Զեկուցողը նշեց, որ ուսանողները պատասխանատվության բարձր զգացումով են մոտեցել հետազոտական աշխատանքներին, և ներկայացվել են լավ աշխատանքներ: Աշխատանքի ընթացքում փորձ է արվել նոր մոտեցումներ ցուցաբերել

դասընթացներին, որպեսզի ուսանողները հստակ պատկերացնեն իրենց կատարելիք աշխատանքի նպատակը, խնդիրները և արդիականությունը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՆՄ անդամ Մ. Ստեփանյանը, ՀՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՀՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

1-ին կիսամյակում իրականացված հետազոտական աշխատանքների արդյունքները գնահատել բավարար:

ԼՍԵՑԻՆ. –

Օրակարգի հինգերորդ հարցի վերաբերյալ հանդես եկավ Վ. Ա. Աղաբաբյանը: Զեկուցողը ներկայացրեց ավարտական աշխատանքների կատարման ընթացքը, ամբիոնում կատարված քննարկումների արդյունքները: Նա նշեց, որ ավարտական աշխատանքների կատարման գործընթացը սկսվել է 2023-2024 ուստարվա սեպտեմբերից: Յուրաքանչյուր ղեկավար ամսվա մեջ որոշակի գրաֆիկով կոնսուլտացիոն հանդիպումներ է ունենում ուսանողների հետ: Զեկուցողը նշեց, որ տվյալ պահին ուսանողների մեծ մասի նախագծային աշխատանքները ավարտված են: Մասնագիտական պրակտիկայի ընթացքում հիմնականում կատարված են նաև հետազոտական աշխատանքները: Զեկուցողը կարևորեց պրակտիկայի ընթացքում հետազոտական աշխատանքով զբաղվելը և նշեց, որ դա բավականին նպաստում է ավարտական աշխատանքի ընթացքին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.

ՆՄ անդամ Հ. Ասատրյանը, ՆՄ անդամ Մ. Ստեփանյանը, ՆՄ անդամ Ա. Չիբուխչյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ավարտական աշխատանքների կատարման ընթացքը համարել բավարար:

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. Ա. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ք. Հ. ՄԽԻԹԱՐՅԱՆ